Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 56 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ԹՈՒՄՈ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է՝ Տավուշի մարզի Կողբ համայնքում Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, ուսումնական ծրագիր իրականացնելու նպատակով շենքային պայմանների ստեղծումն է:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ծրագիրը իրականացվելու է «Ջի Էյչ Էմ» բարեգործական հիմնադրամի կողմից՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության միջոցով (240,000,000 երկու հարյուր քառասուն միլիոն դրամ), «Կողբ» հիմնադրամի կողմից (144,000,000 հարյուր քառասունչորս միլիոն դրամ) և այլ բարերարների կողմից (1,493,000,000 մեկ միլիարդ չորս հարյուր իննսուներեք միլիոն դրամ) հատկացված և հատկացվելիք նվիրաբերությունների հաշվին:
4.	Ծրագիրը կատարողը	«Սիմոնյան» կրթական հիմնադրամ (քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրը իրականացվելու է Տավուշի մարզի Կողբ համայնքի 1-ին փողոցի 35/1 հասցում: Քաղաքաշինության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 1,877,000,000 (մեկ միլիարդ ութ հարյուր յոթանասունյոթ միլիոն) դրամ:
7.	Բարեգործությունն ստացողը	Ծրագրի շահառուն է՝ Կողբի և հարակից բնակավայրերի համայնքները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը իրականացվելու է մեկ փուլով 2016 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ 1. Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական և այլ նմանատիպ աշխատանքների իրականացում և աշխատանքային նախագծերի համաձայնեցում, թողարկում և հաստատում – 73,000,000 (յոթանասուներեք միլիոն) դրամ, 27.09.2016

		թվականից մինչև 30.06.2018թ-ը (մինչև 2017 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում կնքվել է՝ 71 205 000 դրամի գործարք): 2. Շինարարական և բարեկարգման աշխատանքների իրականացում – 1,604,000,000 (մեկ միլիարդ վեց հարյուր չորս միլիոն) դրամ, 01.03.2017 թվականից մինչև 31.12.2023 թվականը, (մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում կնքվել է՝ 674 818 531 դրամի գործարք): 3. Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողություն, խորհրդատվական ծառայությունների ստացում, փաստագրման, հատակագծման և իրավունքի պետական գրանցման աշխատանքների իրականացում – 18,000,000 (տասնութ միլիոն) դրամ, 01.03.2017 թվականից մինչև 31.12.2020 թվականը: 4. Հողամասի, շենքի կամ շինության ձեռքբերում – 170,000,000 (հարյուր յոթանասուն միլիոն) դրամ, 15.09.2022 թվականից 31.12.2023 թվականը՝ Հայաստանի Հանրապետությունում: 5. Վարչական ծախսեր - 12,000,000 (տասներկու միլիոն) դրամ 27.09.2016 թվականից մինչև 30.09.2018 թվականը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում ՀՀ-ից – 10,000,000 (տաս միլիոն) դրամ, 27.09.2016 թվականից մինչև 30.06.2020 թվականը: 2. Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում արտերկրից – 63,000,000 (վաթսուներեք միլիոն) դրամ, 27.09.2016 թվականից մինչև 30.06.2020 թվականը: 3. Շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռքբերում Հայաստանի Հանրապետությունից – 1,252,000,000 (մեկ միլիարդ երկու հարյուր հիսուներկու միլիոն) դրամ, 01.03.2017 թվականից մինչև 31.12.2023 թվականը: 4. Շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռքբերում արտերկրից – 352,000,000 (երեք հարյուր հիսուներկու միլիոն) դրամ, 01.03.2017 թվականից մինչև 31.12.2023 թվականը:

		5. Հողամասի, շենքի կամ շինության ձեռքբերում Հայաստանի Հանրապետությունում – 170,000,000 (հարյուր յոթանասուն միլիոն) դրամ, 15.09.2022 թվականից 31.12.2023 թվականը: 6. Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողություն, խորհրդատվական ծառայությունների ստացում, փաստագրման, հատակագծման և իրավունքի պետական գրանցման աշխատանքների ձեռքբերում Հայաստանի Հանրապետությունից – 12,000,000 (տասներկու միլիոն) դրամ, 01.03.2017 թվականից մինչև 31.12.2020 թվականը: 7. Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում արտերկրից – 6,000,000 (վեց միլիոն) դրամ, 01.03.2017 թվականից մինչև 30.09.2020 թվականը:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ – 8,000,000 (ութ միլիոն) դրամ, 01.10.2016 թվականից մինչև 30.09.2020 թվականը: 2. Գործուղման ծախսեր – 3,000,000 (երեք միլիոն) դրամ, 01.10.2016 թվականից մինչև 30.09.2020 թվականը: 3. Գրասենյակային և այլ ծախսեր – 1,000,000 (մեկ միլիոն) դրամ, 01.10.2016 թվականից մինչև 30.09.2020 թվականը:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Կողբի համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

18.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ